ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ Վեդի համայնքի Արալեզ բնակավայրի «Արալեզի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ –ում երաժշտության դաստիարակի 1 դրույքով, պարուսույցի 0.5 դրույքով, ֆիզ. հրահանգչի 0.5 դրույքով թափուր հաստիքներով աշխատատեղերը համալրելու համար:

Երաժշտության դաստիարակի, պարուսույցի, ֆիզ. հրահանգչի համար նախատեսված վարձատրությունը որոշվել է ըստ ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակով: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ-ի N 08-Ն ՀՐԱՄԱՆԻ մշակված հարցաշարի: Հարցազրույցն անցկացվում է յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին մասակցելու համար ներկայացնել՝

1.Դիմում /ՁԵ1/

2. Միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

3.Անձը հաստատող փաստաթուղթ

4.Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/

5.Ինքնակենսագրություն

6.Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում են: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են լիազոր մարմնի (Վեդու համայնքապետարանի) պաշտոնական կայքում հրապարակման օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 23.10.2024թ-ից մինչև 19.11.2024թ. ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09^{00}- 17^{00}-ն՝ հետևյալ հասցեով՝ **Արալեզ բնակավայր Թումանյան 10:**

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 21-ին ժամը 14^{00}-ին Վեդի համայնքի Արալեզ բնակավայրի «Արալեզի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ Վեդի համայնքի, Արալեզ **բնակավայր Թումանյան 10 :**

Էլեկտրոնային հասցե՝ aralezimankapartez@mail.ru

Տեղեկությունների համար զանգահարել 094-90-84-10 հեռախոսահամարով: